ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 մարտի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

31
(3240)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳԵՐԹԱՆԿԱՐԺԵՔ ՀԵԾԱՆԻՎԸ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, որ հանուն պաշտոնի հեծանիվ էր վարում եւ 20 կգ-ից ավելի քաշ կորցրեց, պարզվում է՝ գերթանկարժեք հեծանիվ էր վարում: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց նախարար Արսեն Թորոսյանի հեծանիվը եւ պարզեց, որ լուսանկարում երեւացող հեծանիվը Canyon Aeroad մրցարշավային, https://www.canyon.com/en-nz/blog-content/events/ բարձր դասի carbon հեծանիվների ընտանիքին է պատկանում: Canyon-ի պաշտոնական կայքում Aeroad CF SLX 7 Di2 մոդելը վաճառվում է 5,099 դոլարով, CF SLX 8 Di2-ը՝ 6,199 դոլարով, CF SLX 9 Di2-ը՝ 8,299 դոլարով, իսկ Aeroad CFR AXS տարբերակը սկսվում է 10,499 դոլարից: Լուսանկարից հեծանիվի ճշգրիտ կոմպլեկտացիան հաստատել հնարավոր չէ, բայց ակնհայտ է, որ խոսքը «սովորական» հեծանիվի մասին չէ:

Այսինքն՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը գերթանկարժեք հեծանիվ էր վարում: Ուսումնասիրեցինք նրա հայտարարագիրը, բայց հեծանիվի մասին տվյալներ չգտանք: Այս թանկ հեծանիվի արժեքը ուշագրավ է այնքանով, որ Armstat-ի հրապարակած 2024 թվականի տվյալներով՝ Հայաստանի բնակչության 21.7%-ը ապրել է ազգային աղքատության գծից ներքեւ: Որոշ մարզերում պատկերը շատ ավելի ծանր է. Շիրակում աղքատությունը կազմել է 43.0%, Տավուշում՝ 39.9%, Վայոց ձորում՝ 30.3%:

Այս թվերը պարզապես վիճակագրություն չեն. դրանք տասնյակ հազարավոր ընտանիքների առօրյա ընտրությունն են՝ դեղորա՞յք, սնո՞ւնդ, թե՞ կոմունալ վճար: Իսկ սոցիալական հարցերի նախարարը գերթանկարժեք հեծանիվ է վարում: Քանի դեռ Հայաստանի հազարավոր ընտանիքներ շարունակում են ապրել աղքատության պայմաններում, հանրային պաշտոն զբաղեցնող անձի ցուցադրական թանկարժեք առօրյան դառնում է ոչ միայն անձնական ճաշակի, այլեւ քաղաքական ու բարոյական պատասխանատվության թեմա:

Հիշեցնենք, որ Արսեն Թորոսյանը, իհարկե վկայի կարգավիճակով, անցնում է ՔՈՎԻԴ-19-ի քրեական գործով, որը 6 տարի շարունակ քննվում է:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում էր ներկայացրել այս տարվա փետրվարի 11-ին՝ հիմքում դնելով ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի հրապարակային հայտարարությունները, որոնցում նա կասկածի տակ է դրել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի վարքը եւ շահագրգռվածությունը բուքմեյքերական ոլորտի նկատմամբ: Ըստ պատգամավորի՝ ոլորտում ներգրավված որոշ խոշոր սեփականատերեր ԱԺ նախագահի մտերիմներն են: Այս հայտարարությունները, որոնք արվել են հրապարակային հարթակում, ըստ էության, պարունակում են ոչ միայն քաղաքական գնահատական, այլ նաեւ քրեաիրավական հնարավոր տարրեր՝ շահերի բախումից մինչեւ պաշտոնական լիազորությունների չարաշահում: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, արձագանքելով մեր դիմումին, նախ տեղեկացրել էր, որ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքեր չեն հայտնաբերվել: Սակայն նույն օրը մեկ այլ գրությամբ տեղեկացրել է, որ «դիմումի մեջ նշված հանգամանքները պարզելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ եւ ստուգողական գործողություններ, որոնք դեռեւս շարունակվում են»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը պաշտոնին նշանակվել է 2019 թվականին եւ այն եզակի պաշտոնյաներից է, որը իշխանության ձեւավորման փուլից ի վեր շարունակում է զբաղեցնել նույն պաշտոնը: Թովմասյանը Փաշինյանի սրտի պաշտոնյաներից է, քանի որ երբ վարչապետը հայտարարում էր, որ Հայաստանը չունի կադաստրի վկայական, Թովմասյանը լուռ հետեւում էր հանրության վրդովմունքին՝ ըստ էության համաձայնելով առանց կադաստրի երկրի Կադաստրի պետը լինելու հետ: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց Սուրեն Թովմասյանի 2024 թվականի տարեկան հայտարարագիրը եւ պարզեց, որ պաշտոնյան հայտարարագրել է մի քանի միավոր անշարժ գույք, բանկային զգալի միջոցներ, ինչպես նաեւ վարկային պարտավորություններ: Ըստ հայտարարագրի՝ Թովմասյանը ունի ընդհանուր առմամբ 4 միավոր անշարժ գույք՝ դրանցից երեքը բազմամյա տնկիներ են Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքում, իսկ մեկը՝ Երեւանում գտնվող անհատական բնակելի տուն: Սուրեն Թովմասյանը տրանսպորտային միջոցներ չի հայտարարագրել: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց նաեւ պաշտոնյայի ֆինանսական տվյալները եւ պարզեց, որ նա չունի կանխիկ դրամ, սակայն ունի տարբեր բանկային հաշիվներում կուտակված միջոցներ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Արցախից տեղահանված 34 հազար 576 անձ արդեն ստացել է ՀՀ քաղաքացիություն: Այս մասին հայտնեց ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը՝ «Ներառական զարգացում. ճեռքբերումներ եւ անելիքներ» խորագրով համաժողովում անդրադառնալով Ղարաբաղից տեղահանվածներին ՀՀ քաղաքացիություն շնորհելու գործընթացին: «Նշեմ, որ շուրջ հազար դիմումներ, այսինքն՝ հրամանագրի նախագծեր, այս պահի դրությամբ գտնվում են ՀՀ նախագահի աշխատակազմում: Այսինքն՝ օրերի ընթացքում եւս հազար անձի մասով հանգուցալուծում կունենանք եւ կկարողանանք այս պրոցեսը կրկին արագացնել»,-հավելեց Սարգսյանը՝ ընդգծելով, որ քաղաքացիության դիմումների մերժման որեւէ դեպք չի եղել: Խոսելով քաղաքացիություն շնորհելու գործընթացի տեմպերից, նախարարը նշեց, որ եթե անցած տարվա առաջին կիսամյակում ընդամենը 4 հազար դիմում է եղել, ապա այս տարվա երկուսուկես ամսում այդ թիվն արդեն գերազանցել է 5 հազարը:

ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

ՀԵՏՎՃԱՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՃՈՒՄ Է

Հանրապետությունում անկանխիկ գործարքների միջոցով հետվճար ստացող թոշակառուների, նպաստառուների թիվը նկատելի աճում է: «Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության եւ այլ դրամական վճարների վարչության պետ Անահիտ Գալստյանը նշեց, որ բաղաքացիները կարեւորում են այս գործիքակազմը եւ օգտվում են իրենց կենսաթոշակը, նպաստը հետվճարի միջոցով բարձրացնելու հնարավորությունից:

-Պատկերն ավելի պարզ լինելու համար ներկայացնեմ վերջին 3 ամսվա ցուցանիշները: Դեկտեմբեր ամսվա գործարքների գումարը հետվճարի տեսքով վերադարձվել է հունվարին: Այդ ժամանակ 400 հազար մարդ օգտվել է այդ հնարավորությունից: Փետրվարին 415 հազար շահառուի ենք հետվճար տրամադրել, եւ ահա մարտին արդեն կա 447 հազար շահառու: Սա ուրախացնող ցուցանիշ է:

Կառավարությունը կենսաթոշակները բարձրացնելու 2 գործիք է սահմանել: Մեկը հենց հետվճարին է վերաբերում, երբ քաղաքացին իր կատարած անկանխիկ գործարքների դիմաց ստանում է հետվճար 20 տոկոսի չափով՝ առավելագույնը 10 հազար դրամով: Ի դեպ, եթե անկանխիկ գործարքները կատարվում են Arca քարտի միջոցով, ապա հետվճարի 20 տոկոսին գումարվում է եւս 2 տոկոս:

Երկրորդ գործիքը, որը գործնականում կկիրառվի ապրիլի 1-ից, կենսաթոշակների ուղիղ ձեւով բարձրացումն է: Կառավարության որոշմամբ՝ ապրիլի 1-ից կենսաթոշակները հիմնականում բարձրանում են 10 հազար դրամով: Կլինեն խմբեր, որոնց թոշակները ավելի կբարձրանան, կլինեն խմբեր, որոնց թոշակները 10 հազարից մի փոքր քիչ կբարձրանան:

-Ինչպե՞ս է որոշվելու կենսաթոշակի ավելացման չափը:

-Շուրջ 460 հազար շահառուի կենսաթոշակը կբարձրանա 10 հազար դրամով: Մյուս դեպքում, օրինակ, երբ անձը ստանում է խորը աստիճանի սահմանափակումով կենսաթոշակ, այդ դեպքում կավելանա 14 հազար դրամով, իսկ ծանր աստիճանի սահմանափակման դեպքում 12 հազար դրամ: Ջինվորական կենսաթոշակի դեպքում հաշվարկման բանաձեւն այլ է, եւ կապ ունի, թե ինչ պաշտոն է զբաղեցրել քաղաքացին, երբ անցել է կենսաթոշակի: Ըստ այդմ էլ ավելացման չափը տարբեր կլինի:

-Կենսաթոշակի բարձրացումը արդյոք կապ ունի աշխատանքային ստաժի հետ:

-Կենսաթոշակի բարձրացումը կապ չունի աշխատանքային ստաժի հետ: Անկախ այն հանգամանքից, թե քաղաքացին ունի 20 տարվա կամ 10 տարվա աշխատանքային ստաժ, միեւնույնն է, կենսաթոշակի բարձրացումը կազմում է 10 հազար դրամ:

Ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող եւս մեկ կարեւոր փոփոխության մասին: Այսուհետ կանխիկ վճարվող կենսաթոշակ չպետք է լինի: Մինչ այդ, կանխիկով կենսաթոշակ ստացող քաղաքացիներին հնարավորություն էր տրվել ընտրել բանկ, որով կկարողանան ստանալ իրենց թոշակները: Սրա վերաբերյալ Միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ Աննա Բեգլարյանը նշեց.

-Այն քաղաքացիները, որոնք չեն ընտրել իրենց նախընտրած բանկը, համակարգը դա արել է իրենց փոխարեն: Եւ այն շահառուները, որոնք բանկ գնալու, պայմանագիր կնքելու, քարտերը ձեռք բերելու խնդիր կունենան, ապա մեր գործընկեր բանկերի հետ համագործակցությամբ գործընթացը կկազմակերպվի շահառուների տանը:

Եթե կլինեն քաղաքացիներ, որոնք կցանկանան համակարգի կողմից ընտրված բանկը փոխել, ապա ապրիլի 1-ից սկսած դա կարող են կատարել:

Անհրաժեշտ ծրագրային կարգավորումները թեստավորման փուլում են, եւ ապրիլի 1-ից կենսաթոշակառուներն իրենց գումարները կստանան արդեն բարձրացված չափերով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՉՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՅՑ

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ՄԻՊ ներկայացուցիչները մարտի 18-ին չհայտարարված այց են իրականացրել Արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ: Այս մասին տեղեկանում ենք ՄԻՊ աշխատակազմից:

Այցի ընթացքում ՄԻՊ հաստատության ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել ազատությունից զրկված, այդ թվում հացադուլի մեջ գտնվող անձանց հետ: Ուսումնասիրվել են վերջիններիս իրավունքների ապահովման վիճակը՝ ներառյալ առողջության պահպանման իրավունքը, ինչպես նաեւ համապատասխան փաստաթղթերն ու պահման պայմանները: Ազատությունից զրկված անձանց կողմից բարձրացված հարցերը քննարկվել են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ: Այցի մանրամասները խորհրդապահական են եւ ենթակա չեն հրապարակման: Արդյունքները կամփոփվեն, եւ արձանագրված խնդիրների առնչությամբ անհրաժեշտ պարզաբանումներ կպահանջվեն իրավասու մարմիններից: Խնդիրների մի մասի լուծման առնչությամբ արդեն իսկ իրականացվել են համապատասխան քայլեր: Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: ՄԻՊ աշխատակազմի կողմից քրեակատարողական հիմնարկներ իրականացվող այցերը կրում են շարունակական բնույթ:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏ

ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող արշավը վնասում է շրջակա միջավայրը եւ ստեղծում է էկոլոգիական աղետ, որը սպառնում է ոչ միայն Իսլամական Հանրապետությանը, այլեւ շրջակա երկրներին, հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովան: «Իրանի դեմ Իսրայելի եւ ԱՄՆ զինված ուժերի ագրեսիան եւ էներգետիկ օբյեկտներին հարվածները հանգեցնում են շրջակա միջավայրի աղտոտման»,-ասել է Զախարովան ճեպազրույցի ժամանակ:

Նա նաեւ նշել է, որ Իրանում ռմբակոծությունների հետեւանքով ավերված շենքերից առաջացած տոննաներով թափոններն ու բեկորները լուրջ բնապահպանական մարտահրավեր կհանդիսանան առաջիկա տասնամյակների ընթացքում:

«Պայթյունի բեկորների, այրվող նավթի, ոչնչացված ռազմական տեխնիկայի, զինամթերքի, կենցաղային թափոնների, շինարարական աղբի, քիմիական նյութերի, անվադողերի, քայքայվող կենսազանգվածի եւ կոյուղու շերտը կհանգեցնի աննախադեպ ջերմոցային գազերի արտանետումների, հողի, ստորգետնյա ջրերի եւ ափամերձ ջրերի աղտոտվածության աճի ոչ միայն Իրանում, այլեւ ամբողջ տարածաշրջանում»,-ընդգծել է Զախարովան:

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ Է ՀՂԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցավակցական հեռագիր է հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեին համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլյա Երկրորդի մահվան կապակցությամբ: Ցավակցական հեռագրում ասված է. «Ցավով տեղեկացա համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլյա Երկրորդի մահվան մասին: Գրեթե կեսդարյա գահակալության ընթացքում Իլյա Երկրորդի կյանքը եւ ծառայությունը խորհրդանշել են հավատքի, հայրենասիրության եւ ազգերի միջեւ բարեկամության վեհ արժեքները: Նրա անմոռանալի ներդրումը հոգեւոր կյանքի զարգացման, հասարակության համախմբման եւ պետականության ամրապնդման գործում հավերժ կմնա բոլորի հիշողություններում: Հայաստանի ժողովրդի եւ անձամբ իմ անունից անկեղծ ցավակցություն եմ հայտնում Վրաստանի կառավարությանը, Վրաց ուղղափառ եկեղեցուն եւ վրաց եղբայրական ժողովրդին՝ կորստի այս դժվարին պահին մաղթելով ուժ եւ տոկունություն»:

ԻՍՐԱՅԵԼԸ ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Իսրայելը հարվածներ է հասցրել Իրանի հարավում գտնվող գազի վերամշակման ամենախոշոր համալիրին եւ որոշ նավթային ենթակառուցվածքների: Այս մասին գրել է իրանագետ Վարդան Ոսկանյանը: «Ըստ իրանական կողմի տեղեկատվության՝ զոհեր չկան, սակայն բռնկվել է հրդեհ, եւ կան նկատելի վնասներ: Իրանն արդեն տեղեկացրել է, որ պատասխան հարվածներ է հասցնելու, այդ թվում՝ նաեւ Պարսից ծոցի արաբական երկրներում առկա նավթագազային ենթակառուցվածքներին: Պատերազմը ստանում է էլ ավելի լայն եւ վտանգավոր ծավալներ, ինչի հետեւանքով նոր մարտահրավերներ են ի հայտ գալու հատկապես համաշխարհային էներգետիկ անվտանգության եւ հնարավոր է նույնիսկ տարածաշրջանի բնապահպանական ոլորտներում»,-գրել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՎԱԾԵԼ ԵՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈԼՈՐ ԲԱԶԱՆԵՐԻՆ

Իրանի ուժերը հարվածել են Մերձավոր Արեւելքում գտնվող ամերիկյան բոլոր բազաներին իրենց վերջին հարձակման ժամանակ, հայտնել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը: «Վերջին մի քանի ժամերի ընթացքում զինված ուժերը «Իսկական խոստում 4»-ի 62-րդ փուլի ընթացքում մի շարք հզոր գործողություններ են իրականացրել՝ թիրախավորելով տարածաշրջանում գտնվող ամերիկյան բոլոր բազանները, ինչպես նաեւ սիոնիստների հավաքատեղիներն ու մարտական աջակցության կենտրոնները»,-ասվում է ԻՀՊԿ-ի հայտարարության մեջ, որը մեջբերել է Fars լրատվական գործակալությունը:Պահապանների կորպուսը հայտարարել է, որ հարձակվել է Թել Ավիվի, Բիր Շեբայի, Հայֆայի եւ Աքրայի վրա Իսրայելում, ինչպես նաեւ թվարկել է ամերիկյան բազանները տարածաշրջանում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գլխավոր դատախազը 2026 թվականի մարտի 16-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել 2004 թվականի մայիսի 1-ին ծնված Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին մասով (պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելը): ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վլադիմիր Գասպարյանի որդու նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Հիշեցնենք, որ Վլադիմիր Գասպարյանի որդին ամիսներ առաջ էր նշանվել Լեւոն Տեր-Պետրոսյանի թոռնուհու հետ:

ԵՆԹԱԴՐՅԱԼ ԿԵՂԾ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ԵՂԲՈՐ ԹԵԹԵՎ ՊԱՏԺԻ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եղբայրը՝ Ավետ Կոնջորյանը, 2025-ի հուլիսին մեկ տարով զրկվել էր տրանսպորտային միջոց վարելու իրավունքից: Սակայն 3 ամիս անց Կոնջորյանը նորից հայտնվել է մեքենայի ղեկին, հայտնաբերվել պարեկների կողմից, հարուցվել է քրեական վարույթ՝ տրանսպորտային իրավունքից զրկված լինելով մեքենա վարելու հոդվածով:

Վերահաս քրեական պատասխանատվության ընթացքում որոշվել է համաձայնությամբ տուգանք նշանակել Կոնջորյանին. «համաձայնությամբ տուգանք» կարգավորումը թույլ է տալիս ոչ մեծ ծանրության, առաջին անգամ հանցանք կատարած լինելու դեպքում մեղադրյալի նկատմամբ կիրառել տուգանք՝ խուսափելով այլ պատժատեսակից: Ավետ Կոնջորյանը, 2010-ին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով դատապարտվել էր, սակայն սա չի խանգարել, որ առանց իրավունքի մեքենա վարելու քրեական գործի նյութերում ոստիկանության կողմից հայտնվի դատվածություն չունենալու մասին տեղեկանք, ու Կոնջորյանը հնարավորություն ստանա դատական գործը հանգուցալուծել համաձայնությամբ տուգանքով:

Ինչպե՞ս է քրեական վարույթում հայտնվել այդպիսի տեղեկանք ու օգնել Կոնջորյանին ազատվել ավելի խիստ պատժից, երբ Կոնջորյանն ուներ դատվածություն. ոստիկանությունը «Ազատությանը» պարզաբանել է, որ իրենց կողմից նման տեղեկանք Քննչական կոմիտեին չի տրվել: Քննչական կոմիտեն էլ պնդում է, որ ոստիկանությունից է ստացել համապատասխան տեղեկանքը:

Կոնջորյանը մեքենա է վարել առանց դրա իրավունքի

Ըստ «Դատալեքս» տեղեկատվական հարթակի՝ 2025-ի հուլիսին Ավետ Կոնջորյանը 1 տարով զրկվել է մեքենա վարելու իրավունքից: Ընդամենը երեք ամիս անց պարեկները Կոնջորյանին նորից տեսել են «Մերսեդես» մակնիշի մեքենայի ղեկին: Կոտայքի մարզի քննչական վարչությունում նախաձեռնվում է քրեական վարույթ, Ավետ Կոնջորյանի նկատմամբ հարուցվում է հանրային քրեական հետապնդում, եւ մոտ մեկ ամիս հետո գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան: Մեկ շաբաթ անց նիստ է նշանակվել ու որոշվել համաձայնությամբ տուգանքի վարույթ կիրառել, ինչին Կոնջորյանը չի առարկել:

Դատարանը համաձայնությամբ տուգանք նշանակելու որոշման հիմքում դրել է ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի ձեւ 8 տեղեկանքը, ըստ որի Ավետ Կոնջորյանը նախկինում դատապարտված չի եղել: Դատարանը վճռել է կիրառել համաձայնությամբ տուգանք 375 հազար դրամի չափով ու տարաժամկետել դրա վճարումը, քանի որ Ավետ Կոնջորյանը պնդել է՝ ի վիճակի չէ գումարն ամբողջությամբ ու միանգամից վճարել: Այս տարվա հունվարի 29-ին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Ավետ Կոնջորյանին առաջադրված մեղադրանքը կարող էր ենթադրել նաեւ այլ պատժատեսակներ՝ օրինակ՝ տուգանք առավելագույնը տասնհինգապատիկի չափով (սա մի քանի անգամ ավելի մեծ թիվ կկազմեր), ազատազրկում՝ առավելագույնը մեկ ամիս կամ հանրային աշխատանք մինչեւ 150 ժամ: Այնուհանդերձ, Քննչական կոմիտեի ու մեղադրյալ Կոնջորյանի ցանկությունը՝ համաձայնությամբ տուգանք նշանակելու մասին եւ գործում ոստիկանությունից ստացված տեղեկանքը ավելի մեղմ պատիժ են ապահովել Կոնջորյանի համար:

Ստանալ չդատվածության տեղեկանք՝ ունենալով դատվածություն

Համաձայնությամբ տուգանք նշանակելու կարգավորումները սահմանվում են Հայաստանի քրեական դատավարության օրենսգրքով, եւ սրա կիրառման պահանջներից մեկն այն է, որ անձը նախկինում հանցանք կատարած չլինի: Այնինչ Ավետ Կոնջորյանին 2010-ին մեղադրանք է առաջադրվել առանձնապես խոշոր չափերով խարդախության համար, եւ նա դատապարտվել է: Ըստ գործի՝ Կոնջորյանը, զբաղվելով բնակարանների առուվաճառքով, խաբեությամբ ուրիշի գույքին տիրանալու շուրջ նախնական համաձայնության է եկել Գագիկ Մեսրոպյանի հետ, աբովյանցի Ալվարդ Մկրտչյանին բնակարան վաճառելու պատրվակով որպես կանխավճար մաս-մաս ստացել են մոտ 15 հազար դոլար եւ հափշտակել: Այս դատական գործով Կոնջորյանը մեղավոր է ճանաչվել, դատապարտվել 4 տարվա ազատազրկման, բայց պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ու սահմանվել է փորձաշրջան 3 տարի ժամկետով:

Դատախազությունը բողոքարկել է այս վճիռն ու պահանջել ավելի խիստ պատիժ Ավետ Կոնջորյանի համար, սակայն վերաքննիչ բողոքը մերժվել է, վճիռն էլ՝ մտել օրինական ուժի մեջ: Կոնջորյանի պատիժը մեղմացնող հանգամանքներ են դիտարկվել այն փաստերը, որ նա լիովին փոխհատուցել է տուժողին պատճառված 15 հազար դոլարի վնասը, հարեւանների կարծիքով եղել է հայրենիքի նվիրյալ որդի ու ունեցել երկու մանկահասակ երեխա:

Ավետ Կոնջորյանի՝ 2025-ին ավտոմեքենա վարելու իրավունք չունենալով մեքենա վարելու քրեական վարույթում, սակայն, հայտնվել է ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի ձեւ 8 տեղեկանքն այն մասին, որ նա նախկինում դատված չի եղել: Այս տեղեկանքը տրամադրվում է ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանից: Քարտադարանում ամփոփվում են դատապարտյալների, կալանավորների, հետախուզվողների մասին տվյալները, դրանք տրամադրվում են նաեւ օպերատիվ հետախուզական մարմիններին:

Մանրամասները՝ «Ազատություն»-ում

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Ռուսաստանը խստորեն դատապարտում է Իրանի ղեկավարության անդամների առողջությանը վնաս հասցնելուն ուղղված գործողությունները, մասնավորապես նրանց սպանությունը, հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Գործողություններ, որոնք ուղղված են առողջությանը վնաս հասցնելուն, կամ ավելի շատ՝ինքնիշխան եւ անկախ Իրանի, ինչպես նաեւ այլ երկրների ղեկավարության ներկայացուցիչների սպանությանը: Մենք դատապարտում ենք նման գործողությունները»,-լրագրողներին ասել է Պեսկովը՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք քաղաքական ղեկավարության վերացումը համարվում է ռազմական հանցագործություն, եւ արդյոք Ռուսաստանը որպես այդպիսին է մեկնաբանում Իրանի Գերագույն ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի եւ իրանական ղեկավարության այլ ներկայացուցիչների մահը:

ՀԱՍՏԱՏԵԼ Է

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հաստատել է Իրանի հետախուզության նախարար Էսմայիլ Խաթիբի մահը: Ավելի վաղ Իսրայելի պաշտպանության նախարարը հայտարարել էր, որ նախարարը սպանվել է մարտի 18-ի գիշերը տեղի ունեցած հարձակման ժամանակ: Իսրայելական Channel 12 հեռուստալիքը գրել էր, որ Իսրայելը փորձել է սպանել նախարարին: Նշվում է, որ հարձակումը տեղի է ունեցել Թեհրանում գտնվող նրա տան վրա:

ԴԻՄՈՒՄ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԲԱԶԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է «ԽԼԵԼ»

ՀՀ գլխավոր դատախազությունը դիմում է ներկայացրել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան՝ պահանջելով ԱԱԾ մեկուսարանում կալանքի տակ գտնվող Բագրատ Սրբազանից բռնագանձել սեփականության իրավունքով պատկանող տարածքը:

ArmLur.am-ը զրուցեց վերջինիս պաշտպան Տաթեւիկ Սողոյանի հետ, նա հայտնեց, որ քիչ առաջ են իմացել հայցի մասին, Սրբազանը դեռ հայցի մասին չգիտի:

ArmLur.am-ին գլխավոր դատախազությունից հայտնեցին, որ 2023 թվականի հունիսի 9-ին նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվել է, որ Պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման ամրացված՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր գյուղի 2-րդ փողոցի 1-ին նրբանցքում գտնվող՝ 1198.09 քմ մակերեսով անշարժ գույքը, որից զորանոցը՝ 621.81 քմ, բնակելի շինությունը՝ 121.77 քմ, քարե շինությունը՝ 66.16 քմ, ճաշարանը՝ 225.7 քմ, պահեստը՝ 39.65 քմ, փայտե տնակը՝ 48 քմ, լոգարանը՝ 27 քմ, փայտե տնակը՝ 48 քմ եւ հատուկ նշանակության 6.0536 հա հողամասը 2014 թվականի հուլիսի 24-ի պայմանագրով 8.717.184 դրամով օտարվել է Ա.Ս.-ին:

Հետագայում, 2017 թվականի հուլիսի 17-ին Ա.Ս.-ն նշված հատուկ նշանակության հողատարածքը եւ շինությունները, այդ թվում՝ զորանոցը, ընդամենը 400.000 դրամով օտարել է Վ.Գ.-ին:

Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2014 թվականի հուլիսի 4-ին տրված միասնական տեղեկանքի եւ Վ.Գ.-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վկայակոչված պայմանագրով օտարված հողամասը օտարման պահին եւ առ այսօր ըստ նպատակային նշանակության հանդիսանում է հատուկ նշանակության հողամաս:

Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք հատուկ նշանակության հողեր են: Քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասի եւ Հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է օտարել պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող այն շենքերը կամ շինությունները, որոնք գտնվում են այնպիսի հողամասերի վրա, որոնց սեփականության իրավունքով փոխանցումն արգելված է օրենքով: Նման շենքերը կամ շինությունները կարող են տրամադրվել օգտագործման կամ կառուցապատման իրավունքով:

Վերոհիշյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից հետեւում է, որ հատուկ նշանակության հողերը եւ դրանց վրա կառուցված շենքերն ու շինությունները չեն կարող լինել սեփականության իրավունքով այլ անձի փոխանցման առարկա, ուստի ենթակա չեն օտարման:

Քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան, նկատի ունենալով, որ հատուկ նշանակության հողամասի եւ դրա վրա առկա զորանոցի նկատմամբ օրենքի ուժով չէր կարող ծագել Վ.Գ.-ի սեփականության իրավունքը, ուստի 2026 թվականի մարտի 16-ին Գլխավոր դատախազությունը հայց է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Վ.Գ.-ի՝ պահանջելով Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր գյուղի 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի 1-ին փակուղու թիվ 1 հասցեում գտնվող հատուկ նշանակության 6.0536 հա հողամասը եւ դրա վրա առկա՝ 39.78 քմ մակերեսով բնակելի շինությունը, 30.06 քմ մակերեսով քարե շինությունը, 696.01 քմ մակերեսով զորանոցը, 344.93 քմ մակերեսով ճաշարանը, 35.4 քմ մակերեսով պահեստը, 77.24 քմ մակերեսով փայտե տնակը, 26.84 քմ մակերեսով օժանդակ շինությունը վերադարձնել Հայաստանի Հանրապետության սեփականությանը:

Միաժամանակ գլխավոր դատախազությունը դեռեւս 2023 թվականի նոյեմբերի 14-ին հայց էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Ա.Ս.-ի եւ երրորդ անձանց, այդ թվում՝ Վ.Գ.-ի՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով: Նշված հայցով կիրառվել է հայցային վաղեմություն, սակայն գլխավոր դատախազության կողմից վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառում են իրականացրել «Կապանի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի խոհանոցում եւ պարզել, որ այնտեղ խախտվել են օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ մի շարք նորմեր:

Ի մասնավորի՝

- սննդի կառույցը նախագծված, կառուցված եւ տեղակայված չի եղել այնպես, որ ապահովվի պատշաճ խնամք, մաքրում եւ ախտահանում, կանխվի կամ հնարավորինս նվազեցվի օդից փոխանցվող աղտոտումը, ապահովվեն հիգիենիկ աշխատանքային պայմանները, կանխվի կեղտի կուտակումը,
- հատակի, պատերի, դռների որոշ հատվածներ եղել են ոչ նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել անջրանցիկ, չներծծող, լվացվող, ախտահանվող նյութերից,
- առաստաղները կառուցված չեն եղել այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը եւ մասնիկների թափվելու հնարավորությունը,
- դուրս բացվող պատուհանները չեն ունեցել բացվող եւ մաքրվող միջատապաշտպան ցանցեր,
- աշխատանքային մակերեւույթները, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող սարքավորումները պատրաստված չեն եղել հարթ, մաքրվող, կոռոզիայի չենթարկվող նյութերից, չեն եղել նորոգ, հեշտությամբ մաքրվող, ախտահանվող:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ «Կապանի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հանրային սննդի օբյեկտի՝ խոհանոցի, արտադրական գործունեությունը կասեցվել է: Կազմակերպության տնօրենին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ եւ մանկապարտեզի խոհանոցը համապատասխանեցնել իրավական ակտերի պահանջներին: Հայտնաբերված խախտումները վերացնելու համար վերահսկող կառույցը սահմանել է վերջնաժամկետ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԻՆ ՊԱՐԵԿԻ ՄԵՔԵՆԱ ԵՆ ԱՅՐԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ Արտաշատ քաղաքի բակերից մեկում կասկածելի դեպք է եղել: Մասնավորապես, մեքենա է այրվել, ու դեպքի վայր են մեկնել իրավապահները ու հրշեջ փրկարարները: Ավելի ուշ պարզվել է, որ մեքենան, որը այրել են կամ միգուցե տեխնիկական խնդիրների հետեւանքով այրվել է, պատկանում է Արտաշատի կին պարեկներից մեկին: Իրավապահ մարմինները այս պահին փորձում են հասկանալ՝ մեքենան միտումնավոր են այրել, թե այլ խնդիր է եղել:

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

Արմեն Համլետի Սիմոնյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա 2025 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 17:00-ից սկսած, որպես մեղադրյալ մասնակցել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արման Բաբախանյանի վարույթում քննվող թիվ ԱՐԴ/0282/01/25 քրեական գործով նշանակված դատական նիստին, որի ընթացքում դատավոր Ա. Բաբախանյանը կայացրել է մեղադրական վերդիկտ եւ նույն օրը նշանակել լրացուցիչ դատալսումներ: Լրացուցիչ դատալսումների ընթացքում, օրենքով նախատեսված հարցերի քննարկումն ավարտելուց հետո, դատավոր Արման Բաբախանյանը դատավճիռ կայացնելու համար հեռացել է առանձին սենյակ, որտեղից վերադառնալուց հետո նույն օրը՝ ժամը 18:15-ի սահմաններում, մեղադրական դատավճիռ կայացվելու հանգամանքից, դատական նիստերի քարտուղարի, կարգադրիչների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ուղեկցող դասակի աշխատակիցների ներկայությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել դատավոր Արման Բաբախանյանի եւ վերջինիս ընտանիքի անդամների հասցեին՝ այդ կերպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով դատարանի նկատմամբ, որը դրսեւորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավոր Արման Բաբախանյանին վիրավորելով: Այսինքն՝ Արմեն Համլետի Սիմոնյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 489-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարում:

ԿԱՀՈՒՅՔԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Արշալույս գյուղի բնակիչ 33-ամյա երիտասարդը, չունենալով համապատասխան լիցենզավորում եւ փաստաթղթեր, զբաղվում է կահույքի եւ դռների արտադրությամբ ու վաճառքով: Տեղեկությունը ստուգելու նպատակով համայնքային ոստիկանները մեկնել են Արշալույս գյուղ: Պարզվել է, որ նշված հասցեում գործում է կահույքի արտադրամաս՝ կահույք պատրաստելու համար նախատեսված հաստոցներով, գործիքներով, առարկաներով ու կիսով չափ պատրաստված տարբեր տեսակի կահույքով: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

- *Հանրապետությունում մարտի 17-ից 18-ը բացահայտվել է 142 հանցագործություն, որոնցից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԳԻՍԱԿԱՆԸ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը սկսվել է 2022թ. վերջին, շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024թ. հունիսի կեսին:

Դպրոցի շենքը կառուցվում էր պետական բյուջեի 1 միլիարդ 218 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, շինարարությունը իրականացնում էր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն, սակայն աշխատանքների մի մասն է արված: 2024թ. գարնանը մի քանի ամիս դադարեցվել էր դպրոցի շինարարությունը, տեղացի բանվորները, աշխատավարձի ուշացման պատճառով դուրս եկան գործից: Տեղացի բանվորներին փոխարինեցին հնդիկ բանվորները, ապա՝ արաբները: Քաղաքաշինություն կոմիտեն 2025թ. փետրվարին միակողմանի լուծել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը: Քաղշինից պարզաբանել են, որ «Կանժիլստրոյը» շինարարական աշխատանքները կատարել է ժամկետների խախտումներով եւ որակի շեղումներով, բացի այդ, չի ներկայացրել պայմանագրով պահանջված փաստաթղթերը: Պայմանագիրը միակողմանի խզելուց հետո «Կանժիլստրոյ» ընկերությունը դիմել է դատարան, 2025թ. ապրիլին դատարանը մերժել է նրա պահանջը: Մինչ այդ կատարված աշխատանքների համար «Կանժիլստրոյին» վճարվել է շուրջ 266 միլիոն դրամ:

«Կանժիլստրոյի» հետ կնքված պայմանագիրը դադարեցնելուց հետո հետո դպրոցի շենքի կառուցումը շարունակելու համար 2025թ. մայիսին երկու անգամ հրատապ բաց մրցույթներ են հայտարարվել, որոնք սակայն չեն կայացել, որովհետեւ մասնակից չի եղել: 2025թ. հունիսին առանց մրցույթի մեկ անձից գնման միջոցով պայմանագիր է կնքվել նոր կապալառուի՝ «Պրոմ Գրուպ» ՍՊԸ -ի հետ, որը, ըստ պայմանագրի, պարտավորվել է կատարել Դովեղի դպրոցի շինարարության մնացորդային աշխատանքները: Գնման հրավերով այդ աշխատանքների իրականացման համար սահմանված գինը կազմել է 1 միլիարդ 55 միլիոն դրամ, սակայն շինարարական կազմակերպությունն առաջարկել է 985 մլն դրամ, պայմանագիրը կնքվել է կապալառուի առաջարկած գումարով: Աշխատանքներն ավարտելու համար այդ կազմակերպությանը տրվել է 365 օրացուցային օր ժամկետ:

2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե երբ է ավարտվելու Դովեղի դպրոցի շինարարությունը: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ այդ շինարարությունն ավարտվելու է 2026թ. օգոստոս ամսին: Դպրոցի շինարարությունն այժմ դադարեցված է, Դովեղից հայտնեցին, որ շինկազմակերպության բրիգադը մեկնել է Դովեղից, փոխարինող բրիգադն էլ դեռ չի ժամանել: Քիչ հավանական է, որ մի քանի ամիս հետո՝ հունիսին կամ օգոստոսին, Դովեղի դպրոցի նոր շենքի շինարարությունը ավարտված, դրան կից դպրոցի շինարարության ընթացքում կիսաքանդված, Դովեղ մտնող հիմնական ճանապարհն էլ վերականգնված, վերակառուցված լինի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

14,7 ՄԼՆ ԴՐԱՄ ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐ, 11,1 ՄԼՆ ԽՈՇՈՐ ԾԱԽՍ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վահագն Գրիգորյանի՝ 2024 թվականի տարեկան հայտարարագիրը:

Վահագն Գրիգորյանը պաշտոնը ստանձնել է 2023 թվականի մարտի 27-ին: Նրա ներկայացրած հայտարարագրից պարզ է դառնում, որ պաշտոնյան ունի ինչպես անշարժ գույք, այնպես էլ զգալի դրամական միջոցներ:

Ըստ հայտարարագրի՝ Գրիգորյանը համատեղ սեփականությամբ բնակարան ունի Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, որը ձեռք է բերել 2013 թվականին: Բացի այդ, նրա անվամբ գրանցված է նաեւ ավտոտնակ՝ նույն վարչական շրջանում, գնված 2015 թվականին:

ArmLur.am կայքը ուսումնասիրեց նաեւ պաշտոնյայի շարժական գույքը:

Վահագն Գրիգորյանը հայտարարագրել է 2014 թվականի արտադրության «Toyota» մակնիշի ավտոմեքենա, որը փաստացի տիրապետում է ավելի քան 90 օր:

Ինչ վերաբերում է դրամական միջոցներին, ապա այստեղ պատկերը բավականին խոսուն է:

Բանկային հաշիվներ

- 180,000 դրամ
- 1,081,000 դրամ
- 1,700 դրամ
- 75,000 դրամ

Էլեկտրոնային միջոցներ / կրիպտո

- 80,000 դրամ

Կանխիկ դրամ

- 14,700,000 դրամ

Տարեկան եկամուտ

- Աշխատավարձ՝ 11,791,409 դրամ
- ԻՆԵԿՈ բանկ վարկ՝ 1,245,000 դրամ
- ՎՏԲ բանկ վարկ՝ 230,000 դրամ

Ընդամենը՝ 13,266,409 դրամ

Վարկերի մնացորդ (31.12.2024)

- 1,183,000 դրամ

Ծախսեր

Հանգստի ճանապարհածախս՝

- 2,150,000 դրամ
- Վարկի մարում՝ 2,574,651 դրամ
- Խոշոր միանվագ ծախսեր՝ 11,100,000 դրամ

Խնդրահարույց հարցեր

Հայտարարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վահագն Գրիգորյանի դրամական հոսքերի եւ ծախսերի միջեւ առկա են որոշակի անհամապատասխանություններ, որոնք հարցեր են առաջացնում:

Մասնավորապես, պաշտոնյայի մոտ առկա 14,7 մլն դրամ կանխիկ գումարը գրեթե համադրելի է նրա տարեկան եկամտի հետ, ինչը ենթադրում է պարզաբանման անհրաժեշտություն՝ այդ միջոցների կուտակման աղբյուրների վերաբերյալ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՋՈՀԵՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

Իրանի զինված ուժերը «True Promise 4» գործողության շրջանակում իրականացրել են հերթական լայնածավալ հրթիռային հարվածը՝ թիրախավորելով Իսրայելի տարածքում ավելի քան 100 ռազմական եւ անվտանգության օբյեկտ:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ սա գործողության 61-րդ ալիքն է, որը իրականացվել է ի պատասխան ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող ռազմական գործողությունների: Իրանական կողմը հայտարարել է, որ հարձակումը նաեւ վրեժ է Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի եւ նրա ուղեկիցների սպանության համար:

Հարվածների ընթացքում կիրառվել են «Khorramshahr-4», «Qadr», «Emad» եւ «Khaybar-shekan» տեսակի հրթիռներ, որոնցից մի մասը բազմակի մարտագլխիկներով է: Իրանի պնդմամբ՝ այդ հրթիռները կարողացել են հաղթահարել Իսրայելի բազմաշերտ հակաօդային պաշտպանությունը եւ խոցել նշանակված թիրախները, այդ թվում՝ Թել Ավիվի շրջանում:

Նախնական տեղեկություններով՝ հարձակման հետեւանքով Թել Ավիվի որոշ հատվածներում գրանցվել է էլեկտրաէներգիայի անջատում, ինչը, ըստ աղբյուրների, դժվարացրել է իրավիճակի վերահսկումն ու փրկարարական աշխատանքների կազմակերպումը:

Ըստ նախնական գնահատականների՝ հրթիռային հարվածների հետեւանքով կա ավելի քան 230 զոհ եւ վիրավոր:

Հիշեցնենք, որ լարվածությունը տարածաշրջանում կտրուկ աճել է այն բանից հետո, երբ փետրվարի 28-ին սպանվել է Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին՝ մի շարք բարձրաստիճան զինվորականների եւ քաղաքացիական անձանց հետ միասին: Դրան հաջորդել են ԱՄՆ-ի եւ Իսրայելի լայնածավալ ավիահարվածները Իրանի տարածքում, ինչին ի պատասխան՝ Իրանը սկսել է հակահարվածներ հասցնել ինչպես Իսրայելի տարածքին, այնպես էլ տարածաշրջանում ամերիկյան ռազմաբազաներին:

ԻՐԱՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻՆ

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին միջազգային հանրությանը կոչ է արել միավորվել եւ ընդդիմանալ Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից, իր բնորոշմամբ, «անարդար պատերազմին»:

Արաղչին իր X սոցիալական ցանցում կատարած գրառման մեջ նշել է, որ գնալով ավելանում են այն ձայները, այդ թվում՝ եվրոպացի եւ ամերիկացի պաշտոնյաների շրջանում, որոնք հայտարարում են, որ Իրանի դեմ պատերազմը անարդար է:

«Ավելի շատ միջազգային դերակատարներ պետք է հետեւեն այս օրինակին»,- գրել է նա՝ հավելելով, որ գլոբալ հետեւանքների ալիքը դեռ նոր է սկսվում եւ այն կազդի բոլորի վրա՝ անկախ հարստությունից, կրոնից կամ ռասայից:

Իրանի ԱԳ նախարարը նաեւ անդրադարձել է ԱՄՆ Ազգային հակահաբեկչական կենտրոնի տնօրեն Ջոզեֆ Քենթի հրաժարականի նամակին, որում վերջինս քննադատել է Իրանի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունները:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ը եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ են սկսել Իրանի դեմ՝ փետրվարի 28-ին Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեիի սպանությունից հետո, որի ընթացքում զոհվել են նաեւ մի շարք բարձրաստիճան զինվորականներ եւ քաղաքացիական անձինք:

Հարվածները ներառել են լայնածավալ ավիահարվածներ Իրանի տարածքում՝ թիրախավորելով ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտներ, ինչը հանգեցրել է զգալի կորուստների եւ ենթակառուցվածքների լայնածավալ վնասների:

Ի պատասխան՝ Իրանի զինված ուժերը իրականացրել են հակահարվածներ՝ հրթիռների եւ անօդաչու թռչող սարքերի միջոցով թիրախավորելով ամերիկյան եւ իսրայելական դիրքերը ինչպես Իսրայելի տարածքում, այնպես էլ տարածաշրջանային ռազմաբազաներում:

Թարգմանությունը՝ ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

● *Անցած 1 օրում գրանցվել է 18 ավտովթար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2026թ-ի ապրիլի 2-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 15 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 9.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.3գր), որից 3.6գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 3.3գր) 500 հարգի՝ 98.800 ՀՀ դրամ, 6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 900 հարգի՝323.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 422.100 ՀՀ դրամ: Թիվ 16 լոտ՝ ոսկյա ջարդոն 51.7գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 48.3գր), որից 41.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 38գր) 585 հարգի՝ 1.330.000 ՀՀ դրամ, 5.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 5գր) 500 հարգի՝ 149.000 ՀՀ դրամ, 5.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 303.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.782.000 ՀՀ դրամ: Թիվ 17 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.2գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 119.700 ՀՀ դրամ: Թիվ 18 լոտ՝ ոսկյա ջարդոն 6.3գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 5.4գր), որից 3.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 2.5գր) 500 հարգի՝ 74.800 ՀՀ դրամ, 3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 2.9գր) 585 հարգի՝ 101.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 176.300 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.043004227

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Հռիփսիկ Հովսեփի Վարդապետյանս, կորցրել եմ 1998 թվականին Հայկական բժշկական ինստիտուտի կողմից ինձ տրված «Էրեբունի բժշկական կենտրոն» պետական առողջապահական ձեռնարկությունում, ինտերնատուրայի ընդհանուր բժշկական պրակտիկա մասնագիտությամբ, ընդհանուր պրակտիկայի բժիշկ որակավորման դիպլոմը: Դիպլոմի սերիան 142: Կորցրել եմ նաեւ Երեւանի Հայկական բժշկական ինստիտուտի կողմից՝ 2006 թվականին ինձ տրված բժշկի որակավորմամբ եւ բուժական գործ մասնագիտությամբ դիպլոմը: Դիպլոմի սերիան՝ N 046489:

GTB holding

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ՄԻԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

GTB holding ընկերության աշխատակիցները միջոցառմանը ներկայացրել են ժամանակակից տեխնոլոգիաները, վերջիններիս համակարգային առավելությունները, հատկապես, սեյսմակայունության առումով՝ ի համեմատ ավանդական եռակցման մեթոդի:

GTB holding ընկերության փոխտնօրեն Թեհմինա Վարդանյանը համոզված է՝ այս համագործակցությունը դրականորեն է ազդելու հայկական շուկայի վրա՝ շինարարական ոլորտում աշխատանքը դարձնելով ավելի հեշտ եւ միաժամանակ ավելի արդյունավետ:

Ancon-ը շինարարական ոլորտում հայտնի ապրանքանիշ է, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Մեծ Բրիտանիայում: Ancon-ի արտադրանքը վաճառվում է ամբողջ աշխարհում՝ Եվրոպայում, Ավստրալիայում, Նոլ Զելանդիայում եւ Մերձավոր Արեւելքում:

Գլխավոր տնօրեն Ալեքսանդր Ոյաբովը ներկայացնում է այն հեռանկարները, որոնք ստեղծում է այս համագործակցությունը:

«Մեր հիմնական նպատակն է բարձրացնել տեխնոլոգիայի մակարդակը Շինարարական գործընթացի եւ շինարարական ապահովման: Բարձրացնել այն համաշխարհային մակարդակի: Իսկ համաշխարհային մակարդակն այն է, որ կան շինարարական ամրացման հին մեթոդներ եւ կա ժամանակակից, բարձր տեխնոլոգիական մեթոդ: Մենք ներկայացնում ենք դրանցից մեկը եւ մեր փորձառությամբ կիսվում ենք մեր գործընկերների, այդ թվում՝ GTB-ի ընկերության հետ, աջակցում նրանց այս տեխնոլոգիան շուկայում տարածելու համար:

Նրանք մասնագիտանում են փոքր-ինչ այլ ոլորտում եւ սա է հենց Եվրոպական միտումը, երբ խոշոր որակավորված մետաղագործական կամ գլանող ընկերությունը ձեռք է բերում լրացուցիչ ծառայություններ, որոնք թույլ են տալիս զգալիորեն ընդլայնել ծառայությունը, պարզապես առաջարկը, օգտագործման դեպքերի քանակը: Ահա թե ինչ ենք մենք համատեղ անում»:

Ոյաբկովի խոսքով՝նրանք մեծ գոհունակությամբ են համագործակցում GTB holding-ի հետ եւ սպասելիքներն էլ մեծ են, որ այս համագործակցությունը երկուստեք ավելի լայն հնարավորություններ կստեղծի:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԵՐԹԱԿԱՆ ԿԵՂԾ «ԶԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ»

Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն էին ստացել հանցավոր գործունեությամբ զբաղվող մի խումբ անձանց վերաբերյալ, որոնք նախնական համաձայնությամբ եւ դերերի հստակ բաշխմամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, համացանցային զանգերի միջոցով իրականացնում էին լայնամասշտաբ հափշտակություններ:

Ստացված տեղեկությունների համակողմանի վերլուծության հիման վրա՝ նախաքննական մարմին է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում, նախաձեռնվել է քրեական վարույթ: Մարտի 9-ին Քրեական ոստիկանության Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի եւ Քննչական կոմիտեի Հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունների ծառայողները համատեղ խուզարկություն են իրականացրել Երեւանի Դավթաշեն թաղամասի առանձնատներից մեկում:

Հատկանշական է, որ հանցավոր խումբը նախապես կառուցել էր պաշտպանական յուրօրինակ համակարգ. տարածքը կահավորված էր արտաքին տեսահսկման սարքերով, որոնց միջոցով իրավապահներին նկատելուն պես նախատեսված էր վայրկյանների ընթացքում հոսանքազրկել շինությունը՝ այդպիսով ջնջելով կամ անհասանելի դարձնելով հանցավոր գործունեության բոլոր թվային հետքերը: Իրավապահների արագ ու հմուտ գործողությունների արդյունքում հաջողվել է կանխել նախաքննության համար առանցքային նշանակություն ունեցող թվային ապացույցների ոչնչացումը:

Եւ այսպես, իրավապահների տեսադաշտում հայտնված 14 անձից բաղկացած խումբը գործել էր կազմակերպված եւ հստակ պլանավորված հանցավոր սխեմայով: Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ խմբի անդամները վարձակալել են առանձնատուն, աննկատ մնալու համար իրականացրել ներքին լուսավորության քողարկման հատուկ աշխատանքներ եւ տարածքը կահավորել ժամանակակից համակարգչային տեխնիկայով ու կապի միջոցներով: Գործողությունների առանցքում Airdrop scam մեթոդի կիրառումն էր: Մասնավորապես, ստեղծելով կեղծ ներդրումային հարթակ, հմտորեն թաքցնելով իրենց ինքնությունը, նրանք հանդես են եկել կեղծանուններով: Օգտագործելով հաղորդակցման բարձր հմտություններ եւ տիրապետելով մի քանի օտար լեզուների՝ նրանք թիրախավորել են օտարերկրյա քաղաքացիների՝տրամադրելով կեղծ տեղեկություններ կրիպտոակտիվների շուկայում իբր բարձր եկամտաբերություն ապահովող ներդրումների վերաբերյալ, ինչի արդյունքում իրականացրել են խոշորամասշտաբ հափշտակություններ:

Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության պետ Հայկ Մկրտչյանի խոսքով՝ նախնական տվյալներով հանցավոր խումբը զանգերի կենտրոններ է ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Ներկայումս աշխատանքներ են տարվում օտարերկրյա գործընկերների հետ՝ կենտրոնի գործունեությունն ամբողջությամբ բացահայտելու, ինչպես նաեւ հասցված վնասի չափը հստակեցնելու նպատակով: Իրականացվում են անհրաժեշտ վարույթային գործողություններ՝ հանցավոր սխեմայի մանրամասները եւ դերակատարների շրջանակը պարզելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՐՔԻ ԳԻՆԵՁՈՆ

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԽՈՍՔԸ՝ ՄԵԿ ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Մարտի 17-ին Հայաստանի գրողների միության (ՀԳՄ) կլոր սրահում տեղի ունեցավ բանաստեղծ, մանկագիր եւ նկարիչ Էդվարդ Միլիտոնյանի «Հայոսը Քարթլոսի մասին» գրքի գինեձոնը, որտեղ ներկայացվեցին գրքի նյութերը, մշակութային եւ գրական մոտեցումները եւ այն դիտարկումները, որոնք ընդգծում են հայ-վրացական մշակութային երկխոսության կարեւորությունը:

Գիրքն ամփոփում է Վրաստանի եւ վրաց գրականության վերաբերյալ հեղինակի բանաստեղծությունները, պատմվածքները, էսսեները եւ վրաց գրողների ստեղծագործությունների թարգմանությունները: Հիշատակվում են հայ-վրացական մշակութային կապերի առանցքն ամրակայած Սայաթ-Նովայի, Թումանյանի, Իսահակյանի, Փարաջանովի եւ այլ մեծանուն արվեստագետների գործունեության բարեկամական շառավիղները:

Միջոցառման ընթացքում հնչեցին մտքեր եւ դիտարկումներ գրքի մասին, կարեւորվեց այն, թե ինչպես նման ստեղծագործությունները կարող են տարածաշրջանում մշակութային երկխոսություն ստեղծել եւ ակտիվացնել հայ-վրացական հարաբերությունները: Ներկաները նկատեցին, որ գրականությունը, մշակույթը եւ ստեղծագործական փորձերը հնարավորություն են տալիս երիտասարդ սերնդին ներգրավվել, տեսնել բարեկամության նոր ուղիներ՝ ոչ միայն քաղաքական կամ դիվանագիտական շրջանակներում:

Էդվարդ Միլիտոնյանը ներկայացրեց ժողովածուն եւ ընդգծեց, որ գիրքը ոչ միայն պատմական կամ քաղաքական իմաստ ունի, այլեւ մշակութային, գրական եւ մարդկային երկխոսության հարթակ է. «Հայոսը եւ Քարթլոսը» գրքում ներկայացված պատմությունները, պոեզիան, էսսեները եւ թարգմանությունները խճանկարի պես են՝ ոչ միահամակարգ, եւ յուրաքանչյուր հատված ունի իր յուրահատուկ նշանակությունը»: Հեղինակն ընդգծեց, որ գրքում բարձրացված թեմաներն ու դիտարկումները նպատակ ունեն ոչ միայն հիշեցնել անցյալի մասին, այլեւ կառուցել նոր, ակտիվ մշակութային հարթակ՝ երիտասարդների ներգրավմամբ. «Գրականությունը, մշակույթը եւ ստեղծագործական ակտիվությունը միտված չեն միայն պատմական անցուդարձերին, դրանք ապրեցնում են մարդուն եւ նպաստում ինտելեկտուալ երկխոսությանը տարածաշրջանում»:

Միջոցառման ընթացքում մասնակիցները նկատեցին, թե ինչպես նման ստեղծագործությունները կարող են ընդգծել տարածաշրջանային մշակութային հարուստ անցյալի եւ ներկայության կապերը:

Եզրափակելով միջոցառումը՝ ներկաները շեշտեցին, որ նման նախաձեռնությունները կարեւոր են ոչ միայն գրականության, այլեւ լայն մշակութային դաշտում նոր բարեկամության կետեր ստեղծելու եւ երիտասարդ սերնդին ներգրավելու համար:

Գրքի շնորհանդեսը հիշարժան էր իր կենդանի մթնոլորտով, անկեղծ շփումներով եւ մտորումներ առաջացնող ելույթներով, ինչը ցույց տվեց, թե որքան ուժեղ կարող է լինել գրականությունը՝ ստեղծելու մշակութային ու մարդկային կապեր:

«ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ. ԳՈՐԳ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«Մեգերյան կարպետ» մշակութային համալիրի տնօրեն Լեոնիդ Անդրեասյանի խոսքով՝ Մեգերյան ընտանիքը բարեգործական նպատակով որոշել է վերարտադրել հին գորգերի կրկնօրինակները եւ նվիրաբերել Հայաստանի պատմության թանգարանին:

Թանգարանին նվիրաբերվեց երկրորդ գորգը՝ 17-րդ դարով թվագրվող Արցախի մետաքսե ծածկոցի նմանությամբ: Գորգի վաճառքից ստացված հասույթը կուղղվի թանգարանին մեկ այլ հին գորգ ձեռք բերելուն:

Մարտի 17-ին Հայաստանի պատմության թանգարանում տեղի ունեցավ «Ինքնության դրվագներ. գորգ» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսի փակման արարողությունը: Ցուցադրությունը բացվել էր 2022 թվականի նոյեմբերի 23-ին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային աջակցությամբ: Այն ներկայացնում էր թանգարանի ազգագրության ֆոնդում պահվող գորգերի արժեքավոր ընտրանի՝ ընդգրկելով ուշ միջնադարի (16-18-րդ դարեր) եւ 19-20-րդ դարի առաջին քառորդի նմուշներ:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը նշեց. «Այսօր, երբ արդեն անցել է ավելի քան երեք տարի, թվում է՝ կարծես երեկ էր, երբ բացվեց այս կարեւոր ցուցահանդեսը: «Դրվագներ ինքնության. գորգ» ազգագրական ցուցահանդեսային շարքի շրջանակում այն դարձավ առանցքային նախաձեռնություններից մեկը»:

Ցուցադրության շրջանակում «Մեգերյան կարպետ» մշակութային համալիրի եւ Հայաստանի պատմության թանգարանի միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր: «Մեգերյան կարպետ» մշակութային համալիրի տնօրեն Լեոնիդ Անդրեասյանի խոսքով՝ Մեգերյան ընտանիքը բարեգործական նպատակով որոշել է վերարտադրել հին գորգերի կրկնօրինակները եւ նվիրաբերել թանգարանին: «Մեգերյան կարպետ» թանգարանին նվիրաբերվեց երկրորդ գորգը՝ 17-րդ դարով թվագրվող Արցախի մետաքսե ծածկոցի նմանությամբ: Գորգի վաճառքից ստացված հասույթը կուղղվի թանգարանին մեկ այլ հին գորգ ձեռք բերելուն:

Թանգարանի Ազգագրության բաժնի գիտաշխատող Լիլիա Ավանեսյանն անդրադարձավ ցուցադրության ընթացքին՝ ներկայացնելով ցուցադրված գորգերի տեսակները, դրանց ծագման շրջաններն ու ժամանակագրությունը:

Թանգարանի միջոցառումների կազմակերպման եւ կամավորների ներգրավման պատասխանատու Սյուզաննա Ավագյանն էլ ասաց. «Ավելի քան երեք տարվա ընթացքում ցուցադրությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել այցելուների շրջանում. այն ունեցել է 396,367 այցելու»: Ցուցադրության հիմնական նպատակն էր հանրությանը ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանում պահվող, սակայն մինչ այդ չցուցադրված գորգերի եւ կարպետագործ առարկաների նմուշները: Այս նախաձեռնությունը կարեւոր դեր ունի հայկական գորգագործության ավանդույթների պահպանման, ներկայացման եւ հանրայնացման գործում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՊԱՀՈՎԵԼՈՒ Է ԱՐԴԱՐ ԽԱՂ

Սիսակ Գաբրիելյանը հիշեց Ռուբեն Հայրապետյանին: «Տասը տարի առաջ նման դեպք ունեցանք ֆուտբոլում՝ մրցավարների կողմից պայմանավորված խաղի, ցավոք: Այն ժամանակ ֆեդերացիայի նախագահը հայտարարեց՝ պատժողն ինքն է եւ կպատժի»,- ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի այսօրվա նիստում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ Ռուբեն Հայրապետյանին ակնարկեց հանձնաժողովի ՔՊ-ական նախագահ Սիսակ Գաբրիելյանը: Քննարկվում էր «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին հարցը: Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանխելու է սպորտային մրցումների արդյունքների արհեստական փոփոխումը, ապահովելու է արդար խաղ եւ սպորտի հեղինակություն: Սիսակ Գաբրիելյանը նաեւ առաջարկեց՝ եթե քրեական օրենսգրքում կոնվենցիայից բխող պատիժներ են նախատեսվելու, դրանք սահմանվեն միջին ծանրության հանցանքներ, որպեսզի իրավապահները հնարավորություն ունենան համապատասխան գործունեություն ծավալելու:

ՄԱՐԻԱՄ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ

Մարիամ Ստեփանյանը նշանակվել է կանանց Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: Մինչ այս, նա գլխավորում էր կանանց Հայաստանի Մ-19 հավաքականը: «Ուրախությամբ եւ մեծ պատասխանատվությամբ ընդունում եմ գլխավոր մարզչի պաշտոնը: Հպարտ եմ, որ ունեմ հնարավորություն աշխատելու այս թիմի հետ: Հուսով եմ՝ միասին կաշխատենք նվիրվածությամբ եւ կհասնենք դրական արդյունքի: Բոլորիս մաղթում եմ հաջողություն այս ճանապարհին»,- նշել է Ստեփանյանը: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը հաջողություն է մաղթել Մարիամ Ստեփանյանին նոր պաշտոնում. «Մարիամ Ստեփանյանը երկար տարիներ աշխատել է Հայաստանի տարբեր տարիքային հավաքականներում եւ լավ ծանոթ է կանանց ֆուտբոլի համակարգին»:

● *Մարտի 20-ին Միհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնում տեղի կունենա «Եթե դու մեռնեիր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 6000, 7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչու չի կարելի եկեղեցում նստելիս ոտքը ոտքին գցել: Եւ խնդրում եմ ասել, թե ինչու զույգերին չի կարելի եկեղեցում միմյանց ձեռք բռնել:

Գայանե Միրզոյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե գնում ենք եկեղեցի, որ հանդիպենք Աստծուն, աղոթքի համար առանձնանանք մեր ներսում, ապա ցանկացած բան, որ կարող է մեզ շփոթեցնել, մեր ուշադրությունը շեղել, պիտի հեռացնենք մեզանից: Եթե աղոթելու փոխարեն երիտասարդը բռնել է ընկերուհու ձեռքը, արդյո՞ք նա կկարողանա կենտրոնանալ աղոթքի վրա, թե՞ պիտի ուշադրությունը շեղվի սիրած աղջկա ձեռքի ջերմությամբ:

Հիմա անդրադառնանք ոտքը ոտքին գցելուն: Շատ ավելի պարզ պայմաններում մենք չափազանց զգույշ ենք: Ինչպե՞ս կվերաբերվի մեզ դասախոսը, եթե ոտքներս ոտքին գցած պատասխանենք քննության հարցերին: Կամ արդյո՞ք մեզ թույլ կտանք նման կերպ նստել տնօրենի մոտ: Բնականաբար՝ ոչ: Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է ոտքը ոտքին գցել, եթե գնացել ենք Մեկի մոտ, Ով հազարապատիկ անգամ ավելի մեծ է, քան գործատուն, դասախոսն ու նախագահը: Նա մեր Արարիչն է, մեր Տերը, մեր Հայրը: Եկեղեցում ոչ միայն պետք չէ ոտքը ոտքին գցել, այլ նաեւ ձեռքերը ետեւում կանգնել, ոչ հոգեւոր թեմաներով զրույցի բռնվել, բարձր խոսել, անպարկեշտ հագնված լինել, որպեսզի մյուսներին էլ չխանգարենք, նրանց ուշադրությունը չշեղենք: Կանայք ու աղջիկները եկեղեցի գնալիս պետք է գլխաշորով լինեն: Դա եւս բարեպաշտական մի սովորություն է, որով ցույց ենք տալիս մեր խոնարհությունն Աստծո առաջ:

Հայ առաքելական եկեղեցի
Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կարեւորը, որ քրիստոնյան հետեւի եկեղեցական կարգին ու Աստծո տանը ներկայանա հավուր պատշաճի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Պերճուհի Հայրապետյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը: Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական
հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար է եղել Սիսիան-Գորիս ճանապարհին. 3 զոհերն ու 1 վիրավորը երիտասարդ տղաներ են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 6	+ 8 + 12
Կոտայքի լեռներ	- 1 - 5	+ 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2	+12 + 15
Գեղարքունիք	- 3 - 6	+ 4 + 9
Լոռի	- 3 + 1	+ 4 + 8
Տավուշ	- 2 + 2	+ 6 + 9
Արագածոտնի լեռներ	- 2 - 6	+ 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3	+11 + 16

Արարատ	+ 1 + 4	+14 + 17
Արմավիր	+ 1 + 5	+17 + 19
Վայոց ձորի լեռներ	- 2 - 6	+ 6 + 10
Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 4	+15 + 19
Սյունիքի լեռներ	- 3 - 6	+ 2 + 5
Սյունիքի նախալեռներ	- 3 + 1	+ 8 + 12
Սյունիքի հովիտներ	+ 4 + 7	+15 +18
Երեւան	+ 2 + 4	+16 +18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*